Հավելված 7
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08 -1 **ծածկագրով**
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ և ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08-1

ք.Ճամբարակ « 20 » ապրիլ 2018 թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի ''Ճամբարակի Առողջության Կենտրոն''ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Արմենակ Մելքումյանի այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի Ֆարմ » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա, Ասատրյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

..ó Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով .ատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1142349 / մեկ միլիոն մեկ հարյուր քառասուներկու հազար երեք հարյուր քառասունինը /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

...յրն գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված ...ման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս

է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[1]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[2]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր բանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 ավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ	«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17	Ք.Երևան,Տիչիա 3-րդ նրբ. 2/2
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ	Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Ճամբարակ մ/ճ	Հ/Հ 1570005065330100
Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165	ՀՎՀՀ 01222567
Էլ.փոստ:chambarak@bk.ru	Տնօրեն՝ Ա.Ասատրյան
Տնօրեն՝ Ա.Մելքումյան	
_____	----------
ստորագրություն	ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	մատակարարման				
						Միավորի գին	Ընդհանուր գին	ենթակա քանակը	Ժամկետը	հասցեն
1	33630000/4	Վիշնևսկի մազ	Բալասանային հեղուկաքսուք ըստ Վիշնևսկու (Balsamic liniment by Vishnevsky), հեղուկաքսուք,30գ.: Պիտանելիության ժամկետի առկայություն***	հատ	35	313	10939.95	35	*2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. ****	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
4	33621450/1	Դիրոտոն 20 մգ	լիզինոպրիլ(լիզինոպրիլի դիհիդրատ) lisinopril (lisinopril dihydrate). դեղահատեր. 20մգ, Պիտանելիության ժամկետի առկայություն***	հաբ	600	48	28800	600	*2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. ****	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
5	33621660/1	Ռելիֆ / շնաձկան լյարդի յուղ, բ	Ռելիֆ (Relief), մոմիկներ, ուղիղաղիքային,5մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	մոմիկ	200	192	38426	200	*2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. ****	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
11	33611170/1	Դրոտավերին 2.0	Դրոտավերին drotaverine լուծույթ ներարկման 20մգ/մլ, 2մլ	ամպ	500	54	27000	500	*2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի*	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի

		մլ 7ամ-2պա/	Պիտանելիության ժամկետի առկայություն***						իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	
13	33691188/1	Մեքսիպրիմ 50 մգ 2.0 մլ	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ ethylmethylhydroxypiridine succinate լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	200	200	40000	200	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
17	33621270/2	Վալիդոլ 100 մգ	Վալիդոլ (Validol) դեղապատիճներ, ենթալեզվային, 100մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	դեղապատիճ	500	16	8000	500	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
19	33671125/2	Ամբրոքսոլ սիրոպ	Ամբրոքսոլ ambroxol օշարակ 3մգ/մլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	մլ	250	660	165000	250	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
20	33631310/1	Դիկլոֆենակ 3.0 մլ	Դիկլոֆենակ diclofenac լուծույթ ներարկման 25 մգ/մլ, 3մլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	2000	80	160000	2000	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
23	33621390/1	Կորդարոն 200մգ	ամիոդարոն (ամիոդարոնի հիդրոքլորիդ) amiodarone (amiodarone hydrochloride). Դեղահատեր,200մգ Պիտանելիության ժամկետի	հաբ	300	65	19500	300	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17

									հաշված 21-րդ օրացուցային օրը. *	
25	33621710/1	Ատենոլոլ 100 մգ	Ատենոլոլ, atenolol դեղահատ 100 մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	դեղահատեր	300	5	1632	300	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
29	33651112/2	Ամօքսիկլավ օշարակ	Ամօքսիցիլին , քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid o Պիտանելիության ժամկետի առկայություն***շարակ	սրվակ	40	1100	44000	40	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
32	33671113/2	Սալբուտամոլ աէրոզոլ	Սալբուտամոլ (սալբուտամոլ սուլֆատ) salbutamol (salbutamol sulfate) ցողացիր շնչառման, դեղաչափավորված 100մկգ/դեղաչափ, 200 դեղաչափ Պիտանելիության ժամկետի առկայություն***	սփրեյ	25	1000	25000	25	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
41	33611380/1	Նիկոտինաթթու	Նիկոտինաթթու Nicotinic acid 1գ/ամպուլա Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	120	77	9240	120	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
44	33631300/2	Կետոնալ 100 մգ	Կետոպրոֆեն ketoprofen դեղահատ, 100մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	հաբ	400	67	26800	400	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17

46	33661113/2	Թիոպենտալ նատրի 1.0	Թիոպենտալ (թիոպենտալ նատրիում) thiopental (thiopental sodium), դեղափոշի լիոֆիլիզացված, ն/ե ներարկման լուծույթի, 1000մգ, Պիտանելիության ժամկետի առկայություն***	սրվակ	15	2000	30000	15	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
48	33691188/2	Մեքսիդոլ 5 մլ	էթիլմեթիլհիդրոքսիպիրիդինի սուկցինատ ethylmethylhydroxypiridine succinate լուծույթ ն/ե և մ/մ ներարկման 50մգ/մլ, 5մլ ամպուլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	300	580	174000	300	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
49	33661159/1	Մեզատոն 1.0 1%	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ) phenylephrine (phenylephrine hydrochloride) լուծույթ, մ/մ, ն/ե և ե/մ ներարկման 10մգ/մլ, 1մլ ամպուլներ (10/1x10/, 10/ Պիտանելիության ժամկետի առկայություն***2x5/)	ամպ	40	80.08	3203.2	40	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
									2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
52	33651112/1	Ամօքսիկլավ 0.375	Ամօքսիցիլին, քլավուլանաթթու amoxicillin, clavulanic acid դեղահատ 250մգ+125մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	դեղահատ	200	130	26000	200	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
55	33642210/	Պրեդնիզ	պրեդնիզոլոն	հաբ	500	8	4000	500	2-3րդ եռամսյակ,բայց ոչ	Ք'

	1	ոլոն 5 մգ	(prednisolone),դեղահատեր 5մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***						նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	
57	33621360/1	Նիտրոգլիցերին	Նիտրոգլիցերին nitroglycerin դեղահատ 500մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	հաբ	1000	6	6000	1000	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
72	33641000/1	Սայտոտեկ	Միզոպրոստոլ misoprostol դեղահատ 200մկգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	Դեղահատ	300	194	58200	300	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
78	33621760/1	Էնալապրիլ Հ	Էնալապրիլ enalapril դեղահատ 5 մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	հաբ	3000	15	44700	3000	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
84	33631300/4	Կետոպրոֆեն 2.0	Կետոպրոֆեն ketoprofen լուծույթ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	700	155	108500	700	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի 17
89	33611110/1	Նարինե	Նարինե դեղահատ Պիտանելիության ժամկետի առկայություն***	հաբ	300	32.36	9708	300	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի	Ք' Ճամբարակ'Տ. Մեծի

									կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	
95	33651111/3	ամպիցիլին 0.5	Ամպիցիլին , Ամպիցիլին ampicillin դեղափոշի ներարկման լուծույթի 500մգ Պիտանելիության ժամկետի առկայություն***	սրվակ	50	132	6600	50	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբա Կ'Տ. Մեծ 17
									2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբա Կ'Տ. Մեծ 17
96	33661151/1	Ացիկլովիր 5%	Ացիկլովիր aciclovir քսուք 50մգ/գ Պիտանելիության ժամկետի առկայություն***	տյուբ	10	290	2900	10	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբա Կ'Տ. Մեծ 17
99	33691226	Տրամադոլ 2.0 մլ 50մգ	Տրամադոլ tramadol լուծույթ ներարկման 50մգ/մլ, 2մլ ամպուլ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	500	100	50000	500	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք' Ճամբ Կ'Տ. Մ 17
100	33611110	Նեոսմեկտին	դիոսմեկտիտ (սմեկտիտի դիոկտաէդրիկ) diosmectite (smectite dioctaedric, 3000մգ, 3,76գ, փաթեթիկներ Պիտանելիության ժամկետի	փաթեթ	100	122	12200	100	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ափեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի	Ք' Ճամբ Կ'Տ. Մ 17

			առկայություն***						հաշված 21-րդ օրացուցային օրը. *	
101	33661147/2	Պրոզերին 0.05 % 1.0	Պրոզերին (Proserin) լուծույթ, ներարկման, 0,5մգ/մլ,1մլ ամպուլներ Պիտանելիության ժամկետի առկայություն***	ամպ	50	40	2000	50	2-3րդ եռամսյակ,բայց ոչ շուտ,քան պայմանագրով նախ ատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրացուցային օրը. *	Ք՝ Ճամբարակ Կ'Տ. Մեծի 17

* մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը: Ապրանքը մատակարարելիս պետք է ունենա որակի սերտիֆիկատ, եթե կիրառելի է:

*ապրանքը կարող է մատակարարվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ավելի կարճ ժամկետում, եթե մատակարարը համաձայն է

****** 2,5 տարվանից ավելի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանելիության ժամկետ

Մինչև 2,5 տարի պիտանելության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն երկու երրորդը, Առանձին դեպքերում , այն է հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը , դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

ԳՆՈՐԴ

<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ
ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17
<< ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ Ճամբարակ մ/ճ
Հ/Հ 16023012502500 ՀՎՀՀ 08617165
էլ.փոստ:chambarak@bk.ru
Տնօրեն՝ Ա.Մելքումյան

ստորագրություն

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
Ք.Երևան,Տիչիա 3-րդ նրբ. 2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570005065330100
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն՝ Ա.Ասատրյան

ստորագրություն

Հավելված N 2
« 20» 04 2018 թ. կնքված ՃԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/08-1

ծածկագրով պայմանագրի

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների							
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	33630000/4	Վիշնևսկի մազ	5470	5470	8205	8205	8205	10939.95	10939.95	10939.95
4	33621450/1	Դիրոտոն 20 մգ	14400	14400	21600	21600	21600	28800	28800	28800
5	33621660/1	Ռելիֆ / շնաձկան լյարդի յուղ, բ	19213	19213	28820	28820	28820	38426	38426	38426
11	33611170/1	Դրոտավերին 2.0 մլ /ևո-շպա/	13500	13500	20250	20250	20250	27000	27000	27000
13	33691188/1	Մեքսիպրիմ 50 մգ 2.0 մլ	20000	20000	3000	3000	3000	40000	40000	40000
17	33621270/2	Վալիդոլ 100 մգ	4000	4000	6000	6000	6000	8000	8000	8000
19	33671125/2	Ամբրոքսոլ սիրոպ	82500	82500	123750	123750	123750	165000	165000	165000
20	33631310/1	Դիկլոֆենակ 3.0 մլ	80000	80000	12000	12000	12000	160000	160000	160000
23	33621390/1	Կորդարոն 200մգ	9750	9750	14625	14625	14625	19500	19500	19500
25	33621710/1	Ատենոլոլ 100 մգ	816	816	1224	1224	1224	1632	1632	1632
29	33651112/2	Ամօքսիկլավ օշարակ	22000	22000	33000	33000	33000	44000	44000	44000
32	33671113/2	Սալբուտամոլ աէրոզոլ	12500	12500	18750	18750	18750	25000	25000	25000
41	33611380/1	Նիկոտինաթթու	4620	4620	6930	6930	6930	9240	9240	9240
44	33631300/2	Կետոնալ 100 մգ	13400	13400	20100	20100	20100	26800	26800	26800
46	33661113/2	Թիոպենտալ նատրի 1.0	15000	15000	22500	22500	22500	30000	30000	30000
48	33691188/2	Մեքսիդոլ 5 մլ	87000	87000	130500	130500	130500	174000	174000	174000
49	33661159/1	Մեզատոն 1.0 1%	1602	1602	2402	2402	2402	3203.2	3203.2	3203.2
52	33651112/1	Ամօքսիկլավ 0.375	13000	13000	19500	19500	19500	26000	26000	26000
55	33642210/1	Պրեդնիզոլոն 5 մգ	2000	2000	3000	3000	3000	4000	4000	4000
57	33621360/1	Նիտրոգլիցերին	3000	3000	4500	4500	4500	6000	6000	6000

72	33641000/1	Սայտոտեկ	29100	29100	43650	43650	43650	58200	58200	58200
78	33621760/1	Էնալապրիլ Հ	22350	22350	33525	33525	33525	44700	44700	44700
84	33631300/4	Կետոպրեֆեն 2.0	54250	54250	81375	81375	81375	108500	108500	108500
89	33611110/1	Նարինե	4854	4854	7281	7281	7281	9708	9708	9708
95	33651111/3	ամպիցիլին 0.5	3300	3300	4950	4950	4950	6600	6600	6600
96	33661151/1	Ացիկլովիր 5%	1450	1450	2175	2175	2175	2900	2900	2900
99	33691226	Տրամադոլ 2.0 մլ 50մգ	2500	2500	37500	37500	37500	50000	50000	50000
100	33611110	Նեոսմեկտին	6100	6100	9150	9150	9150	12200	12200	12200
101	33661147/2	Պրոզերին 0.05 % 1.0	1000	1000	1500	1500	1500	2000	2000	2000

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Ճամբարակի ԱԿ>> ՓԲԸ ք.Ճամբարակ, Տիգրան Մեծի 17 << ՎՏԲ Հայաստան բանկ>> ՓԲԸ Ճամբարակ մ/ճ Հ/Հ 16023012502500,ՀՎՀՀ 08617165 Էլ.փոստ:chambarak@bk.ru Տնօրեն՝ Ա.Մելքումյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	«Նատալի Ֆարմ»ՍՊԸ ք.Երևան,Տիչիա 3-րդ նրբ. 2/2 Բանկ «Ամերիաբանկ»ՓԲԸ Հ/Հ 1570005065330100 ՀՎՀՀ 01222567 Տնօրեն՝ Մ.Ասատրյան ---------- /ստորագրություն/

Հավելված 3

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< 20 >> << 04>> 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 20 » 04 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն